ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-2-4-Ա

ք. Երևան 11.03.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի մարտի 11-ի նիստում քննարկեց 2020 թվականի փետրվարի 27-ին «Գաստրո մենեջմենթ» ՓԲԸ-ի տնօրեն Ռազմիկ Չիտչյանի կողմից ներկայացված բողոքը (No20190320) «SEASONS» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայություններ մատուցողի վերաբերյալ հարցում կապ ենթադրելով, որ հայտարկված ապրանքային նշանը պատկանում է հանրահայտ «Four Seasons» հյուրանոցային ցանցի իրավատեր FOUR SEASONS HOTELS (BARBADOS) LTD ընկերությանը, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «Four Seasons» (N 26359) ապրանքային նշանի իրավատերը: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի

Հանրապետությունում պահպանվող «Four Seasons» (FOUR SEASONS HOTELS (BARBADOS) LTD Chancery House, High Street, Bridgetown, Barbados, West indies BB, N 26359, 11.09.2017) համակցված ապրանքային նշանին: Կարգի 115-րդ կետի, 130-րդ կետի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է (ճանաչում է, իրեն հայտնի է): Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը և ավելի վաղ ապրանքային նշանները ընդհանուր առմամբ զուգորդվում են միմյանց հետ՝ միջին սպառողի մոտ առաջացնելով նույն բառի, իմաստի ընկալման զգացողությունը: Ինչպես նաև համակցված ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում գրանցված համակցված ապրանքային նշանի «Seasons» բառային տարրն ամբողջովին ներառված է հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս օգտագործվող «Four Seasons» ապրանքային նշանի նկատմամբ, որը գովազդվում է

https://www.fourseasons.com/?gclid=CjwKCAjwtO7qBRBQEiwAI5WC2z9qY6pZKWaRJQaF18AuxMyVJmc-HeLrflRnkfvkNs-Qyb_hRVB46xoCguMQAvD_BwE&source=gaw09cxbrS03&kw=four+seasons&creative=286821113

731&ef_id=CjwKCAjwtO7qBRB QEiwAI5WC2z9qY6pZKWaRJQaF18AuxMyVJmc-HeLrflRnkfvkN-Qyb_hRVB46xoCguMQAvD_BwE:G:s&s_kwcid=AL!4732!3!286821113731!e!!g!!four%20seasons ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի կողմից բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Քննարկման ընթացքում բողոքարկման խորհրդի մյուս անդամները արտահայտեցին իրենց կարծիքը այն մասին, որ հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 4-րդ մասի 3-րդ կետի դրույթները ներկայացված բողոքը պետք է մերժվի:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ բաժնի կայացրած որոշումը իրավաչափ է և պնդեց, որ ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն էր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քվեարկելով կոլեգիայի նախնական առաջարկը 4 կողմ և 3 դեմ ձայների հարաբերակցությամբ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 83-րդ կետի և 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Գաստրո մենեջմենթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ «SEASONS» (No20190320) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ